ՀՈԿՏԵՄԲԵՐ ԱՄՍՎԱ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

30.09.2014 12:38

Հարգելի՝ փաստաբաններ,
Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը հրավիրում է մասնակցելու 2014 թվականի հոկտեմբեր ամսվա վերապատրաստման դասընթացներին։
Նկատի ունենալով այն, որ ինտենսիվ դասընթացները սկսվել են 2014 թվականի հուլիսի 1-ից, ՀՀ փաստաբանների պալատը 2014 թվականի համար յուրաքանչյուր փաստաբանին, որպես պարտականություն, հաշվեգրելու է վերապատրաստման 12 ակադեմիական ժամ (փաստաբանն իր ցանկությամբ կարող է 24 ժամը լրացնել)։
Հաշվի առնելով այն, որ հիմնականում աշխատանքային օրվա ավարտին է դասընթացը լինելու, ՀՀ փաստաբանների պալատը տրամադրելու է Ձեզ սուրճ, թեյ և թեթև սնունդ:
Գրանցվելու համար կարող եք էլեկտրոնային հաղորդագրություն ուղարկել ani.gharibyan@advocates.am էլ. հասցեին՝ նշելով Ձեր արտոնագրի համարը և հեռախոսահամարը:
Հ.Գ. ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 05.02.2014թ. թիվ 3/6-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանների վերապատրաստման դասընթացներ անցնելու ժամաքանակի և կարգի համաձայն՝ ‘Փաստաբանի վարքագծի կանոնները (դեոնթոլոգիա)’ թեմայով դասընթացների առնվազն 3 ժամ մասնակցությունը պարտադիր է:
(http://advocates.am//images/palati_xorhrdi_voroshumner/Voroshum-xorh-3-6-karg-verapatrastum.pdf)

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի վերապատրաստման հարցերով համակարգող՝
Անի Ղարիբյան

ani.gharibyan@advocates.am
+37410 600 704

ԲԵՌՆԵԼ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })